ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 060-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից կատարված հողամասի գնահատումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդ վաճառքով օտարելուն:

Աճուրդ-վաճառքով օտարվում է.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0032-0006՝ծածկագրով 0,09344 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 2300000 /երկու միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ: Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

2. Կառուցապատման իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրվում է ընդհանուր օգտագործման հողամաս.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0355-0053 ծածկագրով 3,030419 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Հողամասի տարեկան կառուցապատման վճարի

մեկնարկային գինը սահմանել 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
Կառուցապատման մրցույթի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 13 փետրվարի 2025թվականի N 012-Ա որոշման 1-ին կետը:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -13
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ